

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Երկրաբանություն և աշխարհագրություն

1, 2011

*Геология и география*

**Երկրաբանություն**

УДК 551.491.4

Վ. Պ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ռ. Ս. ՄԻՆԱՍՅԱՆ, Գ. Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

**ՀԵՇՈԱՀԱՐ ՕԴԱՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՍԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱԾՈՒՄԸ  
ՀՐԱԲԽԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱՐ**

**Հեռահար մեթոդների կիրառման ընդհանուր դրույթները և նախադրյալները:** Օդատիեզերական ուսումնասիրման մեթոդները առաջին հերթին հայտնի են որպես զոնդավորման մեթոդներ, որոնց կիրառման ժամանակ օգտագործվում են երկրի մակերևույթի լուսանկարները: Լուսանկարային զոնդավորման հիմքը կազմում է ավանդական օդալուսանկարահանումը և լուսանկարահանումը, որոնք իրականացվում են բազմալիքային լուսանկարչական և հեռուստաարձավորումների օգնությամբ:

Հեռահար ուսումնասիրությունների համար օգտագործվում են հետևյալ միջակայքի ալիքները. ուլտրամանուշակագրույն՝  $0,27\text{--}0,4$  մկմ, տեսանելի կամ լուսային՝  $0,4\text{--}0,78$  մկմ, ինֆրակարմիք՝  $0,7\text{--}0,9$  մկմ, ջերմային ինֆրակարմիք՝  $3,5\text{--}5$  մկմ և  $8\text{--}14$  մկմ, միկրոալիքներ՝  $0,3\text{--}10$  սմ [1]:

Թե ինչ քանակի է ներգիտական կարող է կուտակել այս կամ այն միջակայքը երկրի մակերևույթին օրվա ընթացքում և նրա որ քանակը կարող է ցրել՝ կախված է առաջին հերթին ապարի գույնից, նրա միներալային կազմից, ամրությունից, ծակոտկենությունից և այլն [2]:

Պետք է նշել որ, հանույթի անկախ պարամետրերի թվին են պատկանում տեղանքի տոպոգրաֆիան, անդրադարձնող մակերևույթի կողմնորոշումը ուղիղ արեգակնային ճառագայթների նկատմամբ: Հաշվի են առնվում համապատասխան բուսականության զանազանությունը կամ բացակայությունը, ինչպես նաև հողարուսական ծածկի խտությունը, ամրությունը և խոնավությունը: Օրինակ, լեռնային ապարների և հողերի համար կարևոր նախանշան է հանդիսանում անհարթությունը: Կոշտ ստրուկտորային մակերևույթները՝ անհարթ, կտրատված, ճեղքավորված և ծակոտկեն, ունեն մեծ ավելի մակերես, հետևաբար և ավելի մեծ կլանման գործակից, քան հարթ մակերևույթով խիտ մանր հատիկային լեռնային ապարները: Մեծ մակերևույթները ցերեկը արագ տաքանում են, իսկ գիշերը արագ սառչում, այդ պատճառով օդատիեզերական պատկերներում ավագաքարերը ավելի խավար են, քան կավերը: Լեռնային ապարաների գույնը և սպեկտրալ բազմազանությունը որոշվում է նրանց միներալային կազմով՝ քաց ապարաները

իրենց վրա ընկնող արեգակնային էներգիայի մեծ մասը անդրադարձնում են, իսկ մուգ ապարները՝ կլանում:

Հեռահար ուսումնասիրությունների տվյալների վերծանման ժամանակ նպատակահարմար է ըստ ստորերկրյա ջրերի ձևավորման և շարժման պայմանների առանձնացնել հետևյալ հիդրոերկրաբանական գոտիները.

- ջրափխանակման ակտիվ գոտի (վերին հարկ);
- դժվար ջրափխանակման գոտի (միջին հարկ);
- չափազանց դժվար կամ ջրափխանակության բացակայության գոտի (ստորին հարկ):

Ստորերկրյա հոսքի ուսումնասիրման նպատակով հեռահար զոնդավորման ժամանակ որոշվում են բնական միջավայրի ջրաֆիզիկական վիճակը բնութագրող պարամետրերը: Օրինակ, օրյեկտի ֆիզիկական տվյալները կարող են բնութագրվել միջավայրի էլեկտրամագնիսական բաղադրիչների օգնությունը: Էլեկտրամագնիսական ալիքները այդ ինֆորմացիան փոխանցում են հեռակա տվյալներ: Այդ գործությունը կատարվում է դիտարկումների տվյալները:

Հեռահար զոնդավորման ամենակարևոր և ամենադժվար խնդիրն է գտնել ճիշտ փոխադարձ կապ դիտարկումներից ստացված էլեկտրամագնիսական բաղադրիչների և բնական միջավայրի պարամետրերի միջև: Եթե այդ փոխադարձ կապը հայտնի չէ, ապա անցումը բնութագրերից բնական միջավայրի պարամետրերին հնարավոր չէ: Հետևաբար, հեռահար զոնդավորման տվյալների հավաստի բացատրությունը լրացնուի ուսումնասիրությունների կարիք ունի: Ինչպես ցույց են տվել գործնական դիտարկումները, դեպքերի մեծ մասում կապը կարող է հասնել շատ բարդ և կոնկրետ լուծումներն՝ անհնար [2, 3]: Սակայն առանձնահատուկ դեպքերում, մասնավորապես ստորերկրյա ջրերի տարածական տեղադրման որոշման ժամանակ, սահմանային պայմանների մասնամասն ընտրությունը բույլ է տալիս պարզեցնել հաշվարկային արտահայտությունները, որից հետո հնարավոր կինդի խնդիրի լուծումը [4]:

Ստորերկրյա ջրերի առկայության դեպքում հաճախ անհնար է հեռահար զոնդավորման միջոցով ստանալ բնական միջավայրի պարամետրերի թվին հավասար բնութագրիչներ: Նման դեպքերում նպատակահարմար է արհեստականորեն ներգրավել լրացնուի պարամետր, որի օգնությամբ հնարավոր է կազմել լրացնուի հավասարում, որը չի հակասում գոյություն ունեցող հավասարումներին: Այսպես, օրինակ, ստորերկրյա ջրերի ձևավորման բնութագրիչների որոշման ժամանակ էլեկտրամագնիսական դաշտի բաղադրիչներին կարելի է ավելացնել դիտարկումներից ստացված բնութագրեր, որոնցից են գույնը, ձևը, արեգակնային ճառագայթների անկման անկյունը [1]: Այդ եղանակով կարելի է որոշել օրյեկտի տիպը և որոշ որակական պարամետրեր: Ստորերկրյա ջրերի ուսումնասիրման ժամանակ պետք է նկատի ունենալ, որ օդատիեզերական մեթոդները առաջին հերթին բույլ են տալիս ստանալ օրյեկտիվ և մասնամասն տեղեկություններ վերին հարկի վիճակի և պայմանների մասին: Այս փոքր հզորությամբ շերտի ֆիզիկական և ջրաֆիզիկական բնութագրերից են կախված միջավայրի անդրադարձնող, ճառագայթող և կլանող հատկությունները, որոնք գգալի դեր են կատարում հեռահար զոնդավորման ժամանակ: Վերին շերտի կարևորագույն բաղադրիչներն են գրունտների միներալային և հատիկաշափական կազմը, նրանց ամրությու-

նը, խոնավությունը, ջերմահաղորդականությունը, ջերմունակությունը, բուսական ծածկույթի բնութագրերը և հողի նակերևույթի անհարթությունները:

**Օդատիեզերական տվյալների հիման վրա հրաբխային շրջանների ստորերկրյա հոսքերի ուսումնասիրման օրինակ:** Ստորերկրյա ջրերի առկայության որոշման ժամանակ օդատիեզերական նկարների կիրառման նպատակահարմարությունը դիտարկվել է մի շարք աշխատանքներում [2-4]: Ուսումնասիրողների մեծ մասը համաժիռ է, որ այդ նկարների օգտագործումը նշանակալի դեր ունի հատկապես ստորերկրյա ջրերի ընդհանուր որոնման փուլում: Այդ աշխատանքներում դիտարկում են հեռահար հանույթի կիրառման հնարավորությունները գետահովտային, ավազային զանգվածների, խզումնային խախտումների, արտաքերման կոների, արտեղյան ջրերի ստորերկրյա ավազանների որոնման ժամանակ: Մինչդեռ հրաբխային շրջանների ստորերկրյա ջրերի ուսումնասիրությունները համեմատարար հազվադեպ են [2]:

Օդատիեզերական նկարների վերծանումը ստորերկրյա ջրերի բացահայտման նպատակով հիմնված է ստորերկրյա ջրերի խորքային տարածման ու համբայնացման և բուսականության, ռեկլեֆի ձևի ու ժամանակակից հիդրոգրաֆիական ցանցի միջև գոյություն ունեցող տարբեր տեսակի կապերի վրա: Սովորաբար այդ կապերի բացահայտումը իրականացվում է լանջաֆուտախնդիկացիոն վերլուծման միջոցով: Հեռահար հանույթի նյութերում հրաբխային շրջանների ստորերկրյա ջրերը հիմնականում անմիջական արտացոլում չեն գտնում: Այդ շրջանների օդատիեզերական նկարների վերծանման ժամանակ հիմնական ախտորոշիչ չափանիշներից են ռելիեֆի հետևյալ առանձնահատկությունները. գենետիկական տիպը, բացարձակ նիշը, մեզոմիկրոձևերի բնութագրերը, հիդրոգրաֆիական և էրոզիոն ցանցի պատկերը, ինչպես նաև մակերևույթում մերկացած լավային ապարների լիքոլոգիան: Ստորերկրյա ջրերի մակարդակի տեղադրման մեծ խորությունների դեպքում բուսականության դերը հասնում է մինիմումի: Այդ պատճառով լանջաֆուտախնդիկացիոն անալիզի ընդհանուր առանձնահատկությունների կիրառման ժամանակ առավել նշանակալի են դառնում նրա մորֆոստրուկտուրային և լիքոմորֆային ասպեկտները: Ինչպես ցույց է տալիս փորձը, օդատիեզերական լուսանկարների վերծանման միջոցով Հայաստանի նախալեռնային հրաբխային շրջանների ստորերկրյա ջրերի որոնման ժամանակ մորֆոստրուկտուրային և լիքոմորֆային վերլուծությունները կարող են ունենալ բարձր էֆեկտիվություն [2]: Այստեղ կարևոր են նաև բեկվածքները, որոնք, լինելով ջրակարգավորիչ „կառուցվածքներ”, տիեզերական նկարներում արտահայտվում են որպես տարբեր հնդիկացիոն նախանշաններ:

Հրաբխային տարածքներում բաղված հովհանքների և նրանց հետ կապված ստորերկրյա ջրահոսքերի բացահայտումը ջրաերկրաբանության կարևորագույն խնդիրներից մեկն է, որը իրագործվում է օդատիեզերական լուսանկարների վերծանման միջոցով: Տվյալ դեպքում բացահայտման համար որպես վերծանման ընդունված հիմք հանդիսանում է հիմնականում լիքոմորֆային վերլուծությունը:

Հայտնի է որ ռելիեֆի կառուցվածքի վրա զգալի ազդեցություն են բոլնում ապարների կազմն ու ֆիզիկամեխանիկական հատկությունները: Լավային ծածկոցի լուսանկարների վրա նկատվում են տարբերություններ, որոնք պայ-

մանավորված են հիմնականում այն հովտի կոճֆիզուրացիայով, որով շարժվել է լավան: Կախված ոելիեփի կառուցվածքից՝ լավան հոսում է տարբեր կերպ և սառչելուց հետո պահպանում է հովտին բնորոշ ձևը: Ոելիեփի միկրոձևով կազմված պատկերները առավել ինֆորմատիվ են և հոսավի նախանշան թաղված հովտների վերծանման ժամանակ: Նրանք բույլ են տալիս տեղեկություններ ստանալ ոչ միայն թաղված հովտների առկայության, այլ նաև նրանց կոճֆիզուրացիայի, ինչպես նաև ենթալավային հունի տեղադրման վայրի մասին, որտեղ ձևավորվել է ստորերկրյա լավային հոսքը [2]: Թաղված հովտների և ստորերկրյա ջրահոսքերի բացահայտման համար հոսավի նախանշաններ են հանդիսանում հատկապես այն բեռնաբափող աղբյուրները, որոնք կապված են լավային հոսքերի ծայրամասերի հետ: Ստորերկրյա թաղված հովտների որոնման նպատակով օդատիեզերական լուսանկարների վրա վերծանման ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել անդեզիտաբազալտային և բազալտային հոսքերի տարածման տեղանասերին: Օրինակ, թաղված հովտների և ստորերկրյա ջրային հոսքերի բացահայտման նպատակով Արագածի լավային զանգվածի բազալտային և անդեզիտաբազալտային լավաներն ըստ վերծանման առանձնահատկությունների բաժանված են 3 հասակային խմբերի [2]: Օդատիեզերական բոլոր նկարներում երիտասարդ լավաներն ունեն ավելի մեծ անդրադարձնող հատկություն, քան հները: Սա բացատրվում է նրանով, որ իին լավային հոսքերը ամբողջությամբ ծածկված են հողաշերտով, իսկ երիտասարդների վրա հողաշերտ ընդհանրապես չկա: Լավային ծածկույթի գույնը բազմազան է և կախված է ապարների բյուրեղացման աստիճանից, մուգ միներալների քանակից: Հրաբխային զանգվածների վերին մասերում լավային առաջացումները առավել մուգ են: Այդ շարքում առավել հստակ վերծանման նախանշաններ են պարունակում վերին չորրորդական հոլոցենի լավաները:

Այսպիսով, օդատիեզերական մեթոդների կիրառումը մեծ հեռանկարներ է բացում ստորերկրյա ջրերի համար: Հեռահար ուսումնասիրությունների տվյալների հիման վրա հրաբխային տարածքներում առանձնացվում են ջրաերկրաբանական երեք հիմնական գոտիներ (ըստ հարկերի):

Հրաբխային ջրջանների նախալեռնային տարածքներում ստորերկրյա ջրերի որոնման համար կարևոր է ձևակառուցվածքային և լիթոլոգիական գործունների համատեղ վերլուծությունը, ինչպես նաև բեկվածքների առկայության հաստատումը, որոնք ջրակարգավորիչ „կառուցվածքներ” են և տիեզերական նկարներում արտահայտվում են որպես ինդիկացիոն նախանշաններ:

*Երկրաֆիզիկայի ամբիոն*

*Ստացվել է 06.04.2010*

#### Գ. Բ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ

1. **Шанди Э.** Физические основы дистанционного зондирования. М.: Недра, 1990.
2. **Минасян Р.С., Варданян В.П.** Палеорельеф и распределение подземного стока Центрального вулканического нагорья Армении. Еր.: Асогик, 2003.
3. **Садов А.В., Химичев Л.Г.** Изв. ВУЗ-ов. Геология и разведка. М., 1976, № 11.
4. **Садов А.В.** и др. Аэрокосмические методы поисков подземных вод. М.: Недра, 1985.

В. П. ВАРДАНЯН, Р. С. МИНАСЯН, Г. С. ТОРОСЯН

ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ ДИСТАНЦИОННЫХ  
АЭРОКОСМИЧЕСКИХ МЕТОДОВ ПРИ ИЗУЧЕНИИ ПОДЗЕМНЫХ  
ВОД ВУЛКАНИЧЕСКИХ РАЙОНОВ

Резюме

Аэрокосмические методы исследования известны, в первую очередь, как методы дистанционного зондирования поверхности земли.

При дешифрировании данных дистанционных исследований для определения условий формирования, распределения и движения подземных вод целесообразно выделить следующие гидрогеодинамические зоны:

- зона интенсивного водообмена (верхний этаж);
- зона затрудненного водообмена (средний этаж);
- зона весьма затрудненного водообмена или его отсутствия (нижний этаж);

Приведены основные дешифровочные признаки, используемые для выявления подземных вод в вулканических районах.

V. P. VARDANYAN, R. S. MINASYAN, G. S. TOROSYAN

OPPORTUNITIES IN APPLICATION OF REMOTE AEROSPACE  
METHODS FOR GROUND WATER INVESTIGATIONS IN VOLCANIC  
REGIONS

Summary

Aerospace investigation methods in the first place are known as methods of remote sounding of earth surface.

At decoding the remote data of ground water occurrence and distribution conditions, it is advisable to distinguish the following hydrodynamic zones:

- zone of intense water cycle (upper floor),
- zone of difficult water cycle (middle floor),
- zone of highly difficult or absent water cycle (lower floor).